

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՋԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՆԱՐԻՆԵ ԻՇԽԱՆՅԱՆ

«Սառը պատերազմի» ավարտով միջազգային աշխարհակարգում առկա լարվածությանը փոխարինելու եկավ անվտանգության նոր հայեցակարգերի անհրաժեշտությունը, ուստի հիմք դրվեց նոր միջազգային նորմատիվ-իրավական ակտերի հսկայական համակարգի ձևավորմանը:

ԵՄ հիմնադիր Մասստրիխտյան համաձայնագրի ռազմավարական նշանակություն ունեցող ձեռքբերումներից մեկը ԵՄ անվտանգության շրջանակներում երկկողմ միջկառավարական համաձայնություններից անցումն էր ընդհանուր անվտանգության քաղաքականության: Նորագույն շրջանի աշխարհաքաղաքական վերադասավորումները ԵՄ առջև դրեցին անվտանգության խնդիրների հանդեպ նոր մոտեցման մշակման հրամայականը: Ընդհանուր անվտանգությունը, որի նպատակն Ամստերդամի պայմանագրով սահմանված է «Եվրոպական ինքնության և ինքնիշխանության հզորացումը՝ Եվրոպայում ու աշխարհում խաղաղությունը, անվտանգությունը և առաջընթացը խթանելու համար»<sup>1</sup>, ենթադրում էր անվտանգության ընդհանուր ռազմավարության անհրաժեշտությունը՝ դիմակայելու ժամանակակից աշխարհում օրակարգ եկած նոր և ավանդական սպառնալիքներին՝ միջազգային ահաբեկչությանը, տարածաշրջանային նոր և «սառեցված» հակամարտություններին, զանգվածային ոչնչացման զենքերի տարածմանը և զենք-զինամթերքի անօրինական առևտրին, կազմակերպված հանցավորությանը, անօրինական միգրացիային, բնապահպանական ճգնաժամներին և այլն:

2001 թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկչությունը հարվածեց ոչ միայն ամերիկյան, այլ նաև Եվրոպական անվտանգության պատկերացումներին: Երկրորդ աշխարհամարտն ընդգծեց Եվրասիական տարածքային հարաբերություններում անվտանգության հարցի միասնական Եվրասիական տեսլականի ձևավորման անհրաժեշտությունը (պայքարը ֆաշիզմի դեմ, դիմակայումը ԽՍՀՄ-ին և այլն), իսկ դրան հաջորդած իրադարձությունները (ԱՄՆ-ն 1956 թ. հավանություն չտվեց Սուեզյան ճգնաժամն Անգլիայի և Ֆրանսիայի կողմից զենքով լուծելու փորձին, իսկ 1966 թ. Ֆրանսիայի նախագահ Շարլ դը Գոլը իր երկիրը հանեց ՆԱՏՕ-ի ռազմական կառույցից)<sup>2</sup> լուրջ հակասություն-

<sup>1</sup> «The Treaty of Amsterdam», Part 1, Article 1, Amsterdam, 2 October, 1997, p. 4.

<sup>2</sup> Տե՛ս **Claude Cartigny**, 1966: La France quitte les organismes militaires de l'OTAN, Recherches internationales, № 75, 1 - 2006, էջ 145-154 (<http://www.recherches-internationales.fr/RI75/RI75-Traces-Cartigny.pdf>)

ներ առաջացրին եվրաստլանտյան անվտանգության հեռանկարում:

Այս հակասություններն իրենց գագաթնակետին հասան XXI դարասկզբին, երբ ԱՄՆ-ը հրաժարվեց Իրաքի հետ պատերազմի հարցը քննարկել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում<sup>3</sup>, իսկ ԵՄ հիմնասյուներ Ֆրանսիան, Գերմանիան, Բելգիան հրաժարվեցին միանալ կոալիցիային: Մյուս կողմից, ԵՄ կազմի ընդլայնմամբ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները, ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի մեջ տեսնելով իրենց պաշտպանության և ռազմական անվտանգության երաշխիքը՝ սատարեցին ԱՄՆ-ի նախաձեռնությունը, որի հետևանքով ԵՄ-ի ներսում լուրջ հակասություններ ծագեցին, ինչն ստիպեց ԵՄ կայունությամբ մտահոգ գործիչներին Միության անվտանգության ուղղությամբ գործնական քայլեր նախաձեռնել:

Եվրոպական անվտանգության այսպես կոչված «նոր» մոտեցումը ծագել է Դեյվիդյան գործընթացը սկսվելուն զուգահեռ՝ 1973 թ.-ին: Այն ժամանակ Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդի (այժմ՝ կազմակերպություն) անվտանգության բազմակողմանի մոտեցումն արտացոլում էր Դեյվիդյան վերջնական ակտի երեք հիմնական ուղղությունները: ԵԱԶԿ-ն մարդու իրավունքների հիմնարար ազատությունների պաշտպանությունը և խաղաղության ու կայունության պահպանումը ռազմաքաղաքական ոլորտի շրջանակներում կարևորում էր հավասարապես<sup>4</sup>:

2003 թ. հունիսին հրատարակվեց ԵՄ ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության հարցերով Բարձրագույն ներկայացուցիչ Խ. Սոլանայի ներկայացրած «Անվտանգ Եվրոպան՝ ավելի լավ աշխարհում» փաստաթուղթը<sup>5</sup>: Դետագայում՝ 2003 թվականի դեկտեմբերին, այս փաստաթուղթը հաստատվեց (որոշակի փոփոխություններով) որպես Եվրոպական անվտանգության ռազմավարության պաշտոնական հայեցակարգ<sup>6</sup>:

Բացի անվտանգության համակարգված տեսլական լինելուց, այս փաստաթուղթը նաև փորձ էր՝ նպաստելու ԵՄ անդամ պետությունների միասնականությանը և եվրոպական ինքնության ու ինքնագիտակցության մակարդակի բարձրացմանը, հատկապես երբ «Նոր Եվրոպա» և «Հին Եվրոպա»<sup>7</sup> հասկացությունների ակտիվ շրջանառությունը սպառնում էր նոր ճգնաժամի մեջ մղել ԵՄ անդամ պետությունների համաձայնեցված գործելակերպը և զրոյացնել ԵՄ կայունության ապահովմանն ուղղված ջանքերը:

Եվրոպական անվտանգությունը չի ենթադրում միայն պաշտպանու-

<sup>3</sup> Տե՛ս **Hall Gardner**, The Iraq Crisis and Its Impact on the Future of EU-US Relations: An American View, 2003 ([http://www.cicerofoundation.org/pdf/gardner\\_iraq.pdf](http://www.cicerofoundation.org/pdf/gardner_iraq.pdf))

<sup>4</sup> Տե՛ս **Sven Biscop**, The European Security Strategy: A Global Agenda for Positive Power, 2005, էջ 3-4:

<sup>5</sup> Տե՛ս **Javier Solana**, A Secure Europe in a Better World // European Council. – Thessaloniki, 20.06.2003:

<sup>6</sup> Տե՛ս «A Secure Europe in a Better World. European Security Strategy», Brussels, 12 December, 2003:

<sup>7</sup> «Հին Եվրոպա» և «Նոր Եվրոպա» քաղաքական հասկացությունները լայն շրջանառության մեջ դրեց ԱՄՆ պաշտպանության նախարար Դոնալդ Ռամսֆելդը Իրաքի պատերազմի շուրջ Եվրոպայում ծագած հակասությունների ընթացքում: «Նոր Եվրոպան», ըստ նրա, հետխորհրդային Արևելյան Եվրոպայի երկրներն էին: «Դուք կարծում եք, թե Եվրոպան Գերմանիան ու Ֆրանսիան են: Ես այդպես չեմ մտածում. իմ կարծիքով՝ նրանք Հին Եվրոպան են» (**Donald Rumsfeld**, Secretary Rumsfeld Briefs at the Foreign Press Center. U.S. Department of Defense. January 22, 2003):

թյանն ու ընդհանրապես անվտանգությանն ուղղված ռազմական գործիքները։ Իրականում ԵՄ-ի՝ հիմնական փաստաթղթերի և հայեցակարգերի առանցքը բազմակողմ և համընդգրկուն անվտանգության գաղափարն է, որի աղբյուրն է անվտանգության բոլոր ասպեկտների (քաղաքական, սոցիալ-տնտեսական, իրավական, բնապահպանական, մշակութային և այլն) փոխկախվածությունը։

Պատահական չէ, որ ԵԱՌ հայեցակարգում ընդգծվում են ինչպես ահաբեկչության դեմ պայքարը, տարածաշրջանային հակամարտությունների, զանգվածային ոչնչացման զենքերի տարածման, պետությունների ձախողման (failed states)<sup>8</sup> կանխման անհրաժեշտությունը, այնպես էլ աղքատության հաղթահարմանն ուղղված ծրագրերի մշակումը, ՄԻԱՎ/ՉԻԱՐՀ-ի տարածման դեմ պայքարը և այլ խնդիրներ։

Եթե հաշվի առնենք, որ անվտանգության ռազմավարությունը (թե՛ պետությունների, թե՛ վերազգային կառույցների մակարդակով) պետք է հիմնված լինի այդ սուբյեկտների փոխհամաձայնության վրա, և նրանք պետք է ընդունեն նույն հիմնարար հայացքներն ու սկզբունքները՝ առանցքային կետերում փոխհամաձայնության հասնելու համար, ապա ԵՄ-ի անվտանգության ռազմավարության նպատակն է հասնել այդ փոխհամաձայնությանը՝ առանձնացնելով ընդհանուր սպառնալիքներն ու նշելով դրանց չեզոքացման ճանապարհները։ Այդուհանդերձ, որոշ հեղինակների կարծիքով, այս ռազմավարության և հատկապես սպառնալիքների չեզոքացման գործիքների ստեղծումը հիմնված է աղոտ պատկերացումների վրա, հատկապես երբ խոսքը նոր միջազգային կարգուկանոնի մասին է<sup>9</sup>։

Աշխարհաքաղաքական վերադասավորումներն ու փոփոխություններն առաջ են բերում նոր սպառնալիքների հավանականություն, սակայն ռազմավարության առկայությունը, եթե նույնիսկ այն թերի է որոշ կետերի հստակության հարցում, կենսական անհրաժեշտություն է հատկապես ԵՄ-ի համար, որը, ավելացնելով իր անդամների թիվը, իր տանիքի տակ է առել տարատեսակ հնարավորություններ և քաղաքական ժառանգություն ունեցող երկրներ։

Հատկանշական է, որ ԵՄ անվտանգությունը չի սահմանափակվում միայն իր աշխարհագրական սահմաններով։ «Սոլանայի փաստաթուղթը» ենթադրում է «անվտանգության գոտու» ընդլայնում՝ նպաստելով «լավ կառավարվող» պետությունների ձևավորմանը ԵՄ-ից արևելք և դեպի Միջերկրական ծով<sup>10</sup>։ Այս փաստաթղթում հատուկ ուշադրության են արժանանում ինչպես Բալկանները, այնպես էլ նախկին ԽՍՀՄ տարածքի մի շարք պետություններ՝ Ուկրաինան, Մոլդովան, Բելառուսը և Հարավային Կովկասի երկրները։

<sup>8</sup> Եզրն առաջարկել է ամերիկյան խաղաղության հիմնադրամը (Fund for Peace) և օգտագործվում է նկարագրելու համար այն պետությունները, որոնք ձախողել են ինքնիշխան կառավարման որոշ հիմնարար պայմաններ՝ սեփական տարածքի ֆիզիկական վերահսկողության կորուստ, լեգիտիմ իշխանության քայքայում (միասնական որոշումների ընդունման ձախողում), պատշաճ հանրային ծառայությունների մատուցման անկարողություն և այլն։ Մանրամասն տե՛ս <http://www.fundforpeace.org/>

<sup>9</sup> Տե՛ս **Федоров Ю. Е.** Доктрина безопасности Европейского Союза // "Европейская безопасность: события, оценки, прогнозы". Вып. 10, декабрь, 2003:

<sup>10</sup> Տե՛ս **Javier Solana**, նշվ. աշխ.։

Պատահական չէ, որ անվտանգության հայեցակարգում խոսվում է այն պետությունների մասին, որոնք «պարբերաբար խախտում են միջազգային իրավունքի նորմերը»: ԵՄ-ն ձգտում է նրանց վերադարձնել այդ նորմերի և միջազգային հանրույթի շրջանակներ՝ զգուշացնելով, որ հակառակ դեպքում «դա թանկ կարժենա նրանց համար, մասնավորապես ԵՄ-ի հետ հարաբերությունների մասով»<sup>11</sup>:

Եթե սկզբնական շրջանում ԵՄ անվտանգության քաղաքականությունն ուղղված էր հիմնականում ներքին անհամաձայնությունները մեղմելուն, ապա այսօր անվտանգության հայեցակարգն ընդգրկում է ինչպես անմիջական հարևաններին, այնպես էլ Բրյուսելից հազարավոր կիլոմետրեր հեռու ընկած երկրներ: Համաշխարհային մակարդակում տնտեսական փոխկախվածությունն ուղեկցվում է քաղաքական, մշակութային, իրավական և այլ գործոններով: Այս փոխկախվածությունը նշանակում է, որ աշխարհի ցանկացած ծայրում տեղի ունեցող իրադարձությունները կարող են անմիջական սպառնալիք հանդիսանալ ԵՄ ընդհանուր անվտանգության և կայուն զարգացման հեռանկարին:

ԵՄ շահերն անխզելիորեն կապված են այնպիսի երկրների հետ, որոնք հեռու են ուժային կենտրոններ կամ գերտերություններ համարվելուց, սակայն գտնվում են համաշխարհային քաղաքականության գլխավոր դերակատարների շահերի բախման կենտրոնում (օրինակ՝ Չարավային Կովկասի երկրները, որոնք, ի շարս այլ գործոնների, նշանակալի աշխարհաքաղաքական և ռազմավարական դեր ունեն ԵՄ համար Կասպից ծովից և Կենտրոնական Ասիայից ներկրվող էներգակիրների պաշարների և դրանց տարանցման առումով) և՛ աշխարհագրորեն, և՛ ռազմավարական առումով: Պատահական չէ, որ անվտանգության հայեցակարգը զրոյացնում է աշխարհագրական հեռավորությունը. մեկի անվտանգությունը կախված է մյուսի կայունությունից, ինչը հանգեցնում է բազմակողմ համագործակցության անհրաժեշտության:

ԵՄ օրակարգում է հարավկովկասյան տարածաշրջանում իր ազդեցության լծակների բազմազանեցումը՝ տարածաշրջանը դիտարկելով ոչ միայն որպես ռազմավարական կարևորություն ունեցող էներգակիրների աղբյուր, այլև աշխարհագրական և տնտեսական կարևոր միջանցք, ինչպես նաև յուրօրինակ հարթակ, որն ապահովում է ուղղակի մուտք դեպի Կասպից ծովի պաշարներ, Իրան, Կենտրոնական Ասիա և Չինաստան:

Այս տեսանկյունից ԵԱԲ հայեցակարգում մասնավորապես ասվում է. «ԵՄ մեծապես շահագրգիռ է Չարավային Կովկասում կայունության հաստատմամբ և տարածաշրջանի զարգացմամբ: ԵՄ ցանկանում է տեսնել իրական, կայուն և շարունակական նվիրվածություն ժողովրդավարությանը, օրենքի գերակայությանը, մարդու իրավունքների պահպանմանը, առաջընթաց արձանագրել շուկայական տնտեսության զարգացման գործում»<sup>12</sup>: Վերջին բաղադրիչները, որոնք Սոլանան սահմանում է որպես «ընդհանուր արժեքներ», արտացոլում են տարածաշրջանային հակամարտությունների կանխման և չեզոքացման ԵՄ սխեման :

<sup>11</sup> Նույն տեղում:

<sup>12</sup> “A Secure Europe in a Better World. European Security Strategy”, Brussels, 12 December, 2003.

ԵՄ արտաքին հարաբերությունները համապատասխանում են «տարբերակված ճանապարհային քարտեզ» (differentiated roadmap) գաղափարին, ինչը ենթադրում է տարածաշրջանով պայմանավորված արտաքին քաղաքականություն<sup>13</sup>: Արդարացի է այն համոզմունքը, որ սահմանագծի ընդլայնմամբ «ԵՄ մոտեցավ տարածաշրջանի երկրներին, հատկապես Բելառուսին, Ուկրաինային և Մոլդովային: Եվ այս երկրների անվտանգության խնդիրներն էլ իրենց հերթին մոտեցան ԵՄ-ին»<sup>14</sup>: Սա ևս մեկ փաստարկ է առ այն, որ ԵԱԴ հայեցակարգի ընդունումը կենսական անհրաժեշտություն էր Եվրոպական միության ընդհանուր անվտանգության համար:

ԵՄ անվտանգությունը կառուցելու մոտեցումը ԵՄ-«անվտանգության գոտի» հարաբերություններում փոխշահավետ համագործակցության փորձ է: Այս երկրների ներգրավումը Եվրոպականացման և Եվրոպական ինտեգրման գործընթացներին, ԵՄ-ի կողմից սահմանված հաստատութենական չափորոշիչների մոտարկումը, ի հայտ են բերում ԵՄ-ի անվտանգության նոր մոտեցման և գործընկեր պետություններում բարեփոխումների իրականացման փոխկախվածությունը:

ԵԱԴ ընդունմամբ ԵՄ հաստատեց իր հավակնությունները որպես միջազգային անվտանգության ապահովման կարևոր դերակատար: Նպատակ ունենալով համաշխարհային և տարածաշրջանային մակարդակում արդյունավետ կառավարում իրականացնելու համար գործի դնել ԵՄ ազդեցության գործիքների և լծակների համակարգը՝ ԵԱԴ մշակում է նոր ձևաչափի գործընկերության գործիքներ (ինչպես օրինակ՝ Եվրոպական հարևանության քաղաքականությունը, Արևելյան գործընկերությունը, Ասոցացման համաձայնագրերը):

Արտաքին սպառնալիքները՝ հատկապես այն հարևաններից եկող վտանգը, որոնք նախկին ԽՍՀՄ-ից որպես ժառանգություն ստացել են զինված հակամարտություններ, տնտեսական ճգնաժամ և սոցիալական քայքայված համակարգ, ստիպեցին ԵՄ-ին ստեղծել հարաբերությունների յուրօրինակ ձևաչափ, որը չի ենթադրի անմիջական անդամակցություն, սակայն պայմաններ կստեղծի, որ այդ շրջանները մնան և ամրապնդվեն որպես ԵՄ անուղղակի վերահսկողության տակ գտնվող գոտիներ, որոնք իրենց ներքին քաղաքականությունը կկառուցեն ԵՄ ձևաչափին համապատասխան, իսկ արտաքին քաղաքականության սլաքներն ուղղված կլինեն ԵՄ-ի հետ հարաբերությունների դրական զարգացմանը:

ԵՄ անդամների շարքի ընդլայնումը և նոր հարևանների առկայությունը Միության սահմաններում առաջադրում են այս երկրների հետ հավասարակշռված հարաբերությունների կառուցման, հավաքական անվտանգության և տարածաշրջանային կազմակերպությունների տնտեսական համագործակցության պահանջ, ինչը ԵՄ-ն ձգտում է անել՝ շարժվելով ակտիվ ինտեգրման ճանապարհով: Ներկայում Եվրոպական հարևանության քաղաքականությունը, Արևելյան գործընկերությունը և Ասոցացման համա-

<sup>13</sup> Տե՛ս **Bendiek, Annegret**, Cross-Pillar Security Regime Building in the European Union: Effects of the European Security Strategy of December 2003, 2006, էջ 4-5:

<sup>14</sup> **Georgi Kamov**, EU's Role in Conflict Resolution: the Case of the Eastern Enlargement and Neighbourhood Policy Areas, June, 2006.

ձայնագրերի շուրջ բանակցությունները ԵՄ ընդհանուր անվտանգության քաղաքականության գործնական արտահայտություններն են ԵՄ «անվտանգության գոտու» սահմաններում:

ԵՄ հիմնական փաստաթղթերը նրա արտաքին քաղաքականության ուղենիշերի կատարելագործման արտացոլումն են՝ աշխարհաքաղաքական վերադասավորումներին զուգընթաց: ԵՄ անվտանգության հաստատութեան կատարելագործման ապացույցն է Լիսաբոնյան պայմանագրով նախատեսվող նոր՝ Սիոթյան արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերի գերագույն ներկայացուցչի պաշտոնը<sup>15</sup>:

ԵԱՌ ընդունումից 5 տարի անց՝ 2008 թ. դեկտեմբերին, հրապարակվեց ԵԱՌ ներդրման հաշվետվությունը, որում նշված է, որ նախորդ հինգ տարիների ընթացքում ԵՄ-ի պատասխանատվությունն ավելի է մեծացել, քան երբևէ<sup>16</sup>: Ջանգվածային ոչնչացման զենքերի տարածումը, ահաբեկչությունը և կազմակերպված հանցավորությունը, կիբերանվտանգությունը, էներգետիկ անվտանգությունը, կլիմայական փոփոխությունները շարունակում են մնալ համաշխարհային մարտահրավերների և առանցքային սպառնալիքների շարքում:

Լիսաբոնյան պայմանագիրը ներկայացվում է որպես հաստատութեան ավելի լավ համակարգման և առավել ռազմավարական որոշումների ընդունման հիմք:

Չատկանշական է, որ 2012 թ. Իտալիայի, Լեհաստանի, Իսպանիայի և Շվեդիայի արտգործնախարարները հանդես եկան Եվրոպական գլոբալ անվտանգության ռազմավարության ստեղծման առաջարկով (European Global Strategy (EGS))՝ նպատակ ունենալով «ամրապնդել Եվրոպական միասնական ռազմավարական մշակույթը»<sup>17</sup>:

Եվրոպական ռազմավարական հայեցակարգի փոփոխությունների առումով հետաքրքրական են Շվեդիայի միջազգային հարաբերությունների ինստիտուտի առաջադրած երեք տարբերակները.

- Վերակառուցվածքային ԵԱՌ-ը՝ այն դարձնելով ավելի արդյունավետ: Սրան կարելի է հասնել ենթառազմավարությունների մշակմամբ՝ մասնավորապես գործընկերության, հարևանության և համաշխարհային բազմակողմ միջավայրի համար:

- Վերանայել ԵԱՌ-ը՝ պահպանելով կառուցվածքն ու կողմնորոշվածությունը. վերանայել այն սպառնալիքների, նպատակների, գործընկերության և հնարավորությունների առումով:

- Վերաիմաստավորել (reinvent) ԵԱՌ-ը՝ նախագծելով նոր փաստաթուղթ՝ «մեծ ռազմավարություն», որը կընդգծի Լիսաբոնի պայմանագրում սահմանված ԵՄ-ի շահերն ու արժեքները: Այս ռազմավարությունը կներա-

<sup>15</sup> Տե՛ս Արմեն Զարությունյան, Եվրոպական միության իրավունքի հիմունքները, Եր., 2011, էջ 207:

<sup>16</sup> Տե՛ս «Report on the Implementation of the European Security Strategy», Brussels, 11 December 2008, S407/08:

<sup>17</sup> «Towards a European Global Strategy. Securing European influence in a changing world, European Global Strategy Project, Real Instituto Elcano, 28/5/2013» ([http://www.realinstitutoelcano.org/wps/portal/riecano\\_eng/Content?WCM\\_GLOBAL\\_CONTEXT=/elcano/elcano\\_in/zonas\\_in/europe/european-global-strategy-final-report](http://www.realinstitutoelcano.org/wps/portal/riecano_eng/Content?WCM_GLOBAL_CONTEXT=/elcano/elcano_in/zonas_in/europe/european-global-strategy-final-report))

նի արտաքին քաղաքականության ավելի լայն փաթեթ՝ հակամարտությունների կանխումից մինչև առևտուր և ներքին անվտանգությունից մինչև մարդասիրական օգնություն: Սրան ավելի բնորոշ կլինի «ԵՄ-ի արտաքին գործունեության ռազմավարություն» անվանումը<sup>18</sup>:

Ռազմավարական հարևանության գոտում գործընթացները վերահսկելու և աշխարհաքաղաքական հարթակի վրա մեկ քայլ առաջ գործելու ԵՄ ձգտումն արտացոլված է Միության ուղղորդված գործելակերպի համար նշակված նոր նախաձեռնություններում: ԵՄ անվտանգության ապահովման նշված նախաձեռնությունները վկայում են, որ ԵՄ անվտանգության ռազմավարական ուղենիշերը ներկայումս սրընթաց բարեփոխումների փուլում են:

**НАРИНЕ ИШХАНЫЯН – Геополитические приоритеты Европейской стратегии безопасности.** – Принятие Европейской стратегии безопасности (ЕСБ) – жизненная необходимость и важное приобретение для стран Европейского Союза. Её принятием ЕС подтвердил свои намерения как один из ключевых акторов, обеспечивающих безопасность на всемирной геополитической доске. Механизмы, которые применяет ЕС, распространяя своё влияния и утверждая стабильность в «зоне безопасности», в частности на Южном Кавказе, отражают основные пункты не только ЕСБ, но и Доклада о реализации Европейской стратегии безопасности.

**NARINE ISHKHANYAN – Geopolitical Priorities of the European Security Strategy.** – The adoption of the European Security Strategy was a crucial necessity and important achievement for the common European security. Adoption of ESS confirmed EU's intention as one of the key actors in maintaining security on world geopolitical board. The introduced mechanisms aimed at spreading its influence and ensuring stability in the “zone of security” in the South Caucasus particularly, reflect the main points not only of the ESS but also of the Report on Implementation of the European Security Strategy as well as motives for ensuring security and stability in the region.

---

<sup>18</sup> Stå Lars-Erik Lundin, From a European Security Strategy to a European Global Strategy: Ten Content-Related Issues, № 11, Published by Swedish Institute of International Affairs. www.ui.se, 2012, էջ 1-4: